


ներկայացնեն պատմական դեմքեր, որոնք մեծ մասով ծանօթ են մեզի ուրիշ վաւերացողներէ. իսկ քանի մը հատը բոլորովին անծանօթ կը մնան: Ինչ որ նշան է թէ խմբագիրը քաղած է զանոնք մեզի ծանօթ աղբիւրներէ, Կորին կամ Եղիշէ, այլ դուրս հանած ժողովրդին տեղեակ աղբիւրէ մը: Ապա թէ ոչ պէտք է ենթադրել թէ խմբագիրը իր կողմէ յերկուրած է այդ անունները. բայց ճրի ենթադրութիւն մը ճրի ալ կարելի է մերժել:

Երկրորդ, Շահապիվանի մասնակցող երէցները, ինչպէս տեսանք, իբր եպիսկոպոս ներկայ գտնուած են Արտաշատի ժողովրդին մէջ: Պարագայ մը որ նոյնպէս ցոյց կու տայ՝ թէ մեր այս վաւերացողը իր այս տեղեկութիւնը Եղիշէ դուրս ուրիշ տեղեակ աղբիւրէ մը քաղած է: Ապա թէ ոչ դարձեալ ենթադրելու է որ կանոններու խմբագիրը Եղիշէ քաղելով եպիսկոպոսներու անուններ, անոնցմէ մաս մը իբր եպիսկոպոս նստեցուցած է Շահապիվանի ժողովին մէջ, ուրիշներ իբր երէց, ասոնց վրայ աւելցուցած է իր կողմէն անուններ

(Շարունակելի)



ալ եւ այսպէս ճոխացուցած նախաբանը, ինչպէս պիտի ուղէր ենթադրել Հ. Ալիւեան: Բայց մենք այս ենթադրութիւնը ճրի կը գտնենք, ուստի եւ կը մերժենք:

Կարելի է ընդունիլ թէ վաւերացողութեան մէջ աղաւաղումի միջոցով նոր անուններ ստեղծուին, որոնք միշտ անծանօթ պիտի մնան: Բայց մենք տեսանք թէ ինչպէս աղաւաղ անուն մը թողած է հետքեր տարբեր ձեռագիրներու մէջ եւ յաջորդեցանք երեւան հանել անուն մը «Եւղաղ եպիսկոպոսը» որ ծանօթ էր մեզի Եղիշէին: Այսու մենք երկու շահ ունեցանք. լուսաբանուեցաւ Եղիշէի մէջ խնդրական միացած Եւղաղ եպիսկոպոսի անձը, քանի որ զինքը գտանք Շահապիվանի ժողովրդին մէջ ալ. եւ ունեցանք հաստատութիւնը թէ Շահապիվանի ժողովրդին կանոններու նախաբանը յերկուրածոյ անուններով չէ ճոխացած, այլ պատմական դեմքեր ներկայացընող անուններով:

Հ. Պ. ՀԱՄԵԼԵԱՆ

Ա Ի Ա Ր Ա Յ Ր Ի Ճ Ա Կ Ա Տ Ա Մ Ա Ր Տ Ը

(Եղիշէ, ԳԼՈՒ Զ.)

ՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՄԻԿ ԹԱԳԱՌՈՐԻՆ ԴԵՄ

ՆԻՒՍԱԼԱՌՈՐՏԻ ՀՆԱՐԲՆԵՐԸ

Այնուհետեւ պարսիկ բանակի զօրավարը նկատելով որ այլեւս պատգամաւոր չէր մնացած՝ հայերը խաբելու, և ոչ ալ յոյս ու ակնկալութիւն՝ զանոնք իրենց անքակտելի համաձայնութենէն խախտելու, իր մօտ կանչեց անորէն վասակը և անոր հետեւորդ հայ աշխարհի բոլոր ուրացող իշխանները. հարցաքննեց զանոնք և ուսումնասիրեց յաղթելու հնարագիւտ միջոցները: Երբ տեղեկացաւ ամէն մէկ իշխանի քաջագործութիւններէն շատերը չեց իր հպատակ զօրավարներն ալ իր և հրամայեց փրկելու երամակներն իւր մօտէն բերել. գազանները զանազան խումբերու բաժնեց և իւրաքանչիւր փրկի մօտէն հազար սպառազէն զետեղեց. Հնաշուենք մնացած զօրքը:

ԲՈՏԱՌՈՐԻՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Թագաւորին հրամանով խօսեցաւ նաեւ բարձրաստիճաններուն հետ և ըսաւ. «Իւրաքանչիւր մարդ թող յիշէ մեծ արքային պատուէրը և նպատակ ունենայ՝ մեծ անուն շահիւ: Գերադաս կեանքը: Մի մոռ մահը՝ քան վատանուն կեանքը: Մի մոռ նաք այն իւղը, պսակը, ոստերն ու առատաձեռն նուէրները՝ զոր արքունիքէն պիտի ստանաք: Ամէնքնիդ ալ գաւառներու տէր էք և ամբաւ իշխանութիւն ունիք: Դուք լաւ կը ճանչնաք Հայաստանի զօրութիւնը և հայոց ամէն մէկուն անվեհեր քաջասրտութիւնը. եթէ յաղթուիք՝ թերեւ

ողջ-ողջ զրկուիք այն մեծ հարստութենէն զոր ունիք: Յիշեցէք մանաւանդ ձեր սիրելի լակները, յիշեցէք մանաւանդ ձեր սիրելի բարեկամները. գուցէ արտաքին թշնամիէն ընկճուիք, և ներքին սիրելիներու ողբակից դառնաք»:

Հուսկ յիշատակեց նաեւ իրենց բազմաթիւ դասակը ընկերները, որոնք թէեւ պատերազմէն ազատած էին, սակայն մահապատիժ ստանալով՝ սուրի տակ էին գացել. անոնց տղաքն ու աղջիկները ամբողջ ընտանիքով զրկուել էին տուն ու տեղէ, և հայրենաժառանգ երկիրները զրաւուել:

ՊԱՐՄԻԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Այսպէս խօսեցաւ և արքունական հրամանը շատ ալ աւելի սաստկապիւն ներկայացուց: Ապա կազմակերպեց ու դաւադրեց բոլոր բանակը, և ռազմաճակատը երկարեց տարածեց մեծ դաշտի երկայնքին: Իւրաքանչիւր զազանի աջ ու ձախ կողմերը երեքական հազար սպառազէն զրաւ, իսկ ամէնէն ընտիր զինուորները իր շուրջը խմբեց. ու այսպէս, հզօր աշխարակի կամ անմատոյց բերդի նման որոշեց, զբոշակներ պարզեց և հրամայեց պատրաստ գտնուիլ մեծ փողի ազդանշանին:

Իսկ Ապարհացի գունդը, ինչպէս նաեւ կատիշներու, Հոններու և Գեղերու զօրքերը և ուրիշ անթիւ քաջները պատերազմիկ-

Եւ որովհետեւ եղանակը գարնանային էր, ծաղկազեղ դաշտերը յորգահոս արիւնով ներկուեցան: Իսկ երբ մարդ նկատէր գետնաթաւալ դիակներու հսկայ կոյտերը՝ սիրտը կը ճմլուէր և աղիքները կը գալարուէին, լսելով մանաւանդ վիրաւորներու հեծեծանքներն ու ջարդուածներու մռնչիւնը, խոցուածներու թաւալգլոր շարժիւն ու սողալը, երկչոտներու փախուստը, յուսալքուածներու պահուրտիւր, վատերու յուսահատութիւնը, կրնէրու ճիւղը, սիրելիներու ողբը, մերձաւորներու սուգը, բարեկամներու աւաղումը:

ՔԱՋ ՔԱՋԻ ՀԱՆԴԻՊԱՆ

Արդարեւ ոչ թէ մէկ կողմը յաղթեց և միւս կողմը յաղթուեցաւ, այլ՝ քաջերը քաջերու դէմ ելլելով՝ երկու կողմերն ալ պարտուեցան:

Բայց քանի Հայոց զօրավարը ինկած էր մեծ պատերազմի ընթացքին, այնուհետեւ ալ մէջտեղ գլխաւոր մէկը չկար, որու վրայ յենուելով հաւաքուէին միւս զօրականները: Թէպէտ ողջ մնացողները շատ աւելի էին քան մեռածները, սակայն ցիր ու ցան հղան, ու երթալով երկրին զանազան ամուր կողմերը՝ տիրեցին շատ գաւառներու և բերդերու, զոր ոչ ոք կրնար գրաւել:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԹԻՒՐ

Ահա անուանները այն քաջ նահատակներուն, որոնք հոն, նոյն տեղը վախճանեցան: Մամիկոնեան տոհմէն քաջն Վարդան՝ 133 զինուորներով, Խորխոռունի տոհմէն կորովին Խորեն՝ 19 զինուորներով, Պաւլունի տոհմէն արիւն Արտակ՝ 57 զինուորներով, Գնթունի տոհմէն գարմանալին Տաճատ՝ 19 զինուորներով, Դիմաքսեան տոհմէն իմաստուն Հմայեակ՝ 22 զինուորներով, Քաջբերունի տոհմէն հրաշակերտ Ներսէս՝ 7 զինուորներով, Գնթունի տոհմէն մանուկն Վահան՝ 3 զինուորներով, Ընծային տոհմէն արդարեւ Արտակ՝ 7 զինուոր-

ներով, Սրուանձտեան տոհմէն յառաջադէմ Գարեգին՝ 2 հարազատներով և 18 զինուորներով:

Այս 287 նահատակները՝ ինը մեծամեծ նախարարներուն հետ՝ հոն, այնտեղ մարտիրոսացան: Իսկ թագաւորական տունէն և Արծրունի տոհմէն, ինչպէս նաեւ միւս նախարարական տուներէն, բացի այս 287էն, ուրիշ 740 հոգի եւս կայ, որ նոյն օրուան մեծ պատերազմի ընթացքին՝ իրենց անունը գրեցին կեանքի մատեանին մէջ: Ու բոլորը միասին՝ կ'ըլլան 1036 հոգի:

ՊԱՐՍԻԿ ԲԱՆԱԿԻՆ ԶԱՐԴԸ

Իսկ ուրացողներու կողմէն այն օրը ինկան 3544 մարդ: Անոնցմէ ինը հոգի պատուականազոյններէն էին, որոնց համար շատ վշտացաւ Մուշկան Նիսաւաւուրտ: Մանաւանդ երբ նկատեց որ իր բանակը եօթնապատիկ աւելի վնասուած էր քան հայերունը՝ յուսալքուեցաւ, կորսնցուց իր կորովը և չէր կրնար որոշում տալ. վասնզի պատերազմը իր սպասած ելքը չէր ունեցած: Յատկապէս երբ կը նկատէր ու կը դիտէր իր կողմէն ինկողներու բազմութիւնը, որոնց թիւը՝ Հայոց բանակի կորուստէն բազմապատիկ աւելի կը գտնէր, և գլխաւորաբար այն երեւելի անձերուն կորուստին համար, զոր անուանով մականունով կը ճանչնար թագաւորը՝ սաստիկ տագնապով կը տառապէր: Կը վախնար դէպքերը ճշգրիտ կերպով ներկայացնել և գրել թագաւորին, սակայն ծածկել ալ չէր կրնար, որովհետեւ անկարելի էր այդպիսի մեծ պատերազմի մասին լռել:

ՎԱՍԱԿԻ ԶԱՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Եւ մինչ ինք այսպիսի մտատանջութեան մէջ ընկղմած էր ու սաստիկ սրտնեղած, ուրացող Վասակը՝ որ ինքզինքը ազատեւ էր փրկուել տակ պահուրտելով՝ սկսաւ միտնալ անոր վհատած սիրտը

և զանազան խորհական հնարներ ալ սորվեցնել անոր, թէ ինչպէս կարելի էր խորամանկութեամբ կռուիլ ամրոցներու դէմ: Երդում կ'ընէր թագաւորին անուշով, իր անձին և իր հետ եղող խաբերայ երէցներուն վկայութեամբ. կը թելադրէր՝ զանոնք պատգամաւոր դրկել և այնպէս ցուցնել՝ իբր թէ ապստամբութիւնը նոր հուսած է և դարձեալ իրաւունք չնորհուած է եկեղեցիներ կանգնելու և բոլոր արարողութիւնները առաջուան պէս կատարելու:

Թէպէտ թագաւորի հրամանը իրաւ ելած էր, — վասնզի անոր զօրութիւնը ջախջախուած էր, քանի որ երկու կողմերն ալ խորտակուած էին. — սակայն հայ բանակը՝ որ յաճախ նկատած էր Վասակի չարութիւնն ու խաբէութիւնը՝ չէր կարող իսկոյն հաւատք ընծայել թագաւորի հրամանին:

Աշխարհաբարի վերածեց

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԴԱՏԱՍՏԱՆ ՎԱՍԱԿ ՄԱՏՆԻԶԻ

Ա.

Գունդն արեւու հասած կատարն երկնքի, Շանթ կը թափէր իր կապարճէն թափանցիկ Այրեցաւեր ճամբուն վերայ Ապարի՝ Եռացնելով ալիքն օդին ուռուցիկ: Արեւահար՝ այդ հընդէն բոցարձակ Անապատին մէջ գետուններ թափառկոտ, Կը փնտռէին մութ ապաստան մ'հողին տակ. Լոկ անհամբոյր սոյլը կ'անցնէր օդէ օդ: Թուփերուն մէջ հաղիւ վայրի ծիծառներ, Կ'արձանանան փռնոտ ճիւղի մը ծայրին, Որոնց շուքին ոչ ոք ընկեր առ ընկեր Նստած վայրեց իր մըտերիմ սիրելին: Ոչ մէկ կարկաշ հնչեց այնտեղ անուշիկ, Եւ ոչ փրեց զեփիւտն ուրախ ու զով թեւ. Ոչ մէկ ծաղիկ բացաւ աչքեր կապուտիկ, Ոչ արշալոյսն հոն ժպտեցաւ վարդաբուս: Այլ հեռուէն գեղնած փռչին վերիվայր Լոկ կը յայտնէր կարաւաններ բեռնակիր, Որոնք անջուր ամառութեան մէջ անձայր Խոնջ ճօճումով կը նայէին դէպ' երկիր: Կոճղի մը պէս լայն ծովին մէջ ծրփծրփուն Անոնք անդեկ աստանդական մտածութիւնն ինչպէս մտքին անկերպարան մտածութիւն: Որ ունայն տեղ կը թափառի յամրաբլին: Եւ ինչպէս նոր բուռն խորհուրդ մ'ինքնածին Որ զօրացած ամբողջ հոգւոյն կը տիրէ, Այդպէս նըժոյգ ձի մը մտրակն իր կուշտին Փըրփըրերալ՝ դաշտերն անհուն կը սպառէ: Ուժգին բռնած բաշերն հուժկու նըժոյգին Հեծնողն հաղիւ հեռուն ճամբան կը տեսնէր: